ավատատիրական հակասություններն ու պայքարը։ Պատմիչի այդ տեղեկությունները քննության է առել ակադ. Ի. Ջավախիշվիլին և այլ կերպ մեկնաբանել Գառնիի ճակատամարտում Իվանե աթաբեկի վարքագիծը։ Գիտնականն անհավանական է համարում աթաբեկի գործողությունների նպատակադիր լինելը, քանի որ պարտության դեպքում հենց Իվանեն էր պատասխանատվություն կրելու։ Պատմիչի «ասում են» արտահայտության վրա հենվելով, ուսումնասիրողը կարծում է, որ XIV դարում ապրած մատենագիրն օգտվել է հետագայում հորինված լուրերից։ Ի. Ջավախիշվիլին առավել հավանական է համարում այն, որ Իվանեն չի կարողացել ճիշտ կողմնորոշվել վճռական պահին և այդ պատճառով էլ անհրաժեշտ ժամանակ կռվի չի նետել իր հիմնական ուժերը[25]։

Նախ՝ Իվանեի արարքի ոչ պատահական լինելու մասին։ Վրաց պատմիչը իբրև փաստ է արձանագրում և ոչ թե ենթադրություն անում, որ Իվանեն դիտմամբ չէր ցանկանում օգնել իր առաջապահ ջոկատին։ Հեղինակի «ասում են» արտահայտությունը վերաբերում է սոսկ այն հարցին, թե ինչու էր այդպես վարվում աթաբեկը, ամենևին իսկ կասկածի տակ չառնելով բուն իրողությունը[26]։ Աթաբեկի ռազմական սխալի մասին կարելի կլիներ խոսել, եթե նա շուտ կամ ուշ մարտի մեջ մտներ, սակայն նա գերադասել է ընդհանրապես կռվին չմասնակցել։ Չէ՞ որ Իվանեի համար միանգամայն պարզ պետք է լիներ, որ Ախալցիխեցի եղբայրների ջոկատը, որը, ըստ ալ-Բաղդադիի արժեքավոր վկայության, բաղկացած էր ընդամենը 7 հազար մարտիկից[27], ի վիճակի չի լինելու երկար ժամանակ դիմադրել բացահայտորեն գերակշիռ ուժեր ունեցող թշնամուն։

Պետք չէ մոռացության տալ ևս մեկ կարևոր հանգամանք. Իվանեն կարող էր և այդ պահին դեռևս չզգալ իր քայլի ճակատագրական լինելը, քանի որ, ինչպես ցույց է տվել Ի. Ջավախիշվիլին, վրաց արքունիքում այն մտայնությունն էր տիրում, թե իրենք են հաղթել մոնղոլներին 1220—1221 թթ.,

---

[25] Ս. ԽոցաեօՇՅՀ, նշվ. աշխ., էջ 52—53։ Ինչպես երևում է, այս հարցում Ի. Ջավախիշվիլու իրական կարծիքին անհաղորդ է մնացել Զ. Բունիաթովը, որն անհիմն հայտարարում է, թե ականավոր պատմաբանն ընդունում է Գառնիի ճակատամարտի պարտության պատճառների վերաբերյալ Վրաց ժամանակագրի բացատրությունը (ан-Насави, с. 363)։ Վրացագիտական նորագույն գրականությունում Ջուվեյնիի տեղեկությունների հիման վրա Գառնիում պարտության հնարավոր պատճառ է ենթադրվում խորեզմցիների հանկարծակի գրոհը, սակայն, մյուս աղբյուրների ավելի մանրամասն նկարագրությունները, ինչպես տեսանք, ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայ-վրացական բանակի զորահրամանատարի համար Ջալալ ադ-Դինի գործողություններն անակնկալ չեն եղել։ Նշենք նաև, որ առաջապահ ջոկատին օգնության հասնելու խնդիրը Գառնիում այնքան ակներև է եղել, որ Իվանեի տարեց լինելու պարագայում անգամ փորձառու զորավարի համար այդ լիովին հասկանալի պետք է լիներ։ «Վրաստանի պատմության ակնարկներում» Գառնիի պարտությունը նաև մասամբ Իվանեի ծեր լինելու հանգամանքով է բացատրվում („საქართველოს ისტორიის ნარკვევები“ ტ. III, თბ., 1979, გვ. 540)։

[26] Գառնիի ճակատամարտի մասին Վրաց ժամանակագրի պատմածին կարելի է հավատ ընծայել, քանի որ նա 1226 թ. մարտին Թբիլիսիի զրավման դեպքերը շարադրելիս օգտվում է «ոմն մզվիմեցի աբեղայից» («Վրաց ժամանակագրություն», էջ 66), հետևաբար, հնարավոր է՝ նախորդ իրադարձությունները ավանդելիս ևս ստուգապատում աղբյուր է ունեցել ձեռքի տակ։

[27] C. Cahen, նշվ. աշխ., էջ 159։